ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Եղվարդ համայնք,
ք. Եղվարդ, Երևանյան 1, Հեռ. (0224) 2-11-10, yeghvard.kotayq@mta.gov.am

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

N 1772

23 սեպտեմբեր 2021թ.

ՏԵՂԱԿԱԼ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հովհաննիսյան.

Հայտնում ենք Ձեզ այն մասին, որ Եղվարդի համայնքապետարանը 2021թվականի օգոստոսի 9-ին <<ԿՄԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-21/1>> ծածկագրով գույքի ձեռքբերման նպատակով հայտարարել է էլեկտրոնային աճուրդ: 2021թվականի օգոստասի 18-ին ինքնաշխատ եղանակով <<ԿՄԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-21/1>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի N3 չափաբաժնի(հանդիսությունների սեղան աթոռներով (մեկ սեղան 2 աթոռ)) մասով ընտրված մասնակից է ճանաչվել Գոռ Շեկոյան ԱՁ-ն: 2021թվականի օգոստոսի 18-ին ինքնաշխատ եղանակով <<ԿՄԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-21/1>> ծածկագրով ընթաացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվել է տեղեկագրում:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում վերոնշյալ հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը(28.08.2021թ.):

2021թվականի օգոստոսի 30-ին, ի թիվս ընտրված մասնակիցների, Գոռ Շեկոյան ԱՁ-ին ծանուցվել է պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումն և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 10 աշխատանքնային օրվա ընթացում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումները, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: 13.09.2021թ.-ին լրացել է Գոռ Շեկոյան ԱՁ-ի կողմից պայմանագիր կնքելու ժամկետը, ուստի Գոռ Շեկոյան ԱՁ-ն զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Հիմք ընդունելով վերոգյալը ներկայացնում ենք <<ԿՄԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-21/1>> ծածկագրով ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը՝ Գոռ Շեկոյան ԱՁ-ին ՀՀ ֆինանսների նախարարության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՍԱՐԳՍՅԱՆ

Կատ. ՝ Վ. Վիրաբյան
0224 2-20-24